2004

ԼԱՊՏԵՐ

ՀՈԳԻՈՅ

ՆՈՒԻՐԵԱԼ

ՔՐԻՍՏՈՍԱՍԻՐԱՅ

1826

205
4-29

205
4-29
833-ԱՀ
5042-ատ

ԼԱՄՊՏԵՐ

ՀՈԳԻՈՑ։

Ի ՏԵՐ Կարապետ Աբեղայեան
Կոպոսէ և Պատրիարգէ
Կոստանդնուպօլսոյ։

Պարգև նուիրեալ Լուսաւորչաճ-ին
օրհնեալ ազգիս Հայոց։

Յամ Տ֊ն 1826 • Յունիսի 12։

ՏՊԵԱԼ

Ի ՄԻՋԱԳԻՒՂ։

Ի Տպարանի Պօղոսի արապեան։

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տանն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի և հարսին։ ‖ Մատթ. իԵ. Ի։

5042-ակ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ԱՍՍՀ ՍՍՌ
Ա. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ ԱՆՎԱՆ

3312-Ա.

Խանութումն։

Հոգևոր հովիւներուն պարտաւորուի է՝ իրենց ժողովրդեանը ուսուցանել հոգւոյ փրկութեան հարկաւոր եղածները, որք են հաւատք և բարեգործութիւնք. և այս երկուքը 'ի միասին լինելով փրկութի կը գործեն. վասն զի՝ ոչ հաւատք առանց գործոց կենդանութի ունի, և ոչ գործք առանց հաւատոց. և այս երկուքը պիտի ըլլա ամէն քարոզներուն դիտումը և վախճանը։ Արդեաք ըստորում այս անօրէնութիւնը ժողովրդեանն այ հոգևոր հովիւ կարգեալ եմք, պարտաւորութի ունիմք անոնց հոգւոց փրկութեան հարկաւորները ըստ կարողութեան մերոյ քարոզել։ Բայց որովհետև ոմանք բարեպաշտ անձինք մէնէ խնդիր ըրին քարոզի մէջ խօսվածք խիստ հարկաւորները գրով իրենց տալ. ուստի մեք ևս այն օրերը մեկ երկու քարոզի մէջ խօսվածներէն ծաղկաքաղ արարեալ այս հոգւոյ լապտերը՝ ընծայեցինք փափագանօք խնդրողաց։

Ա՛ն որոյ սիրով և օրհնութիւնք յորդորեմք զամենեսին կարդալ զայս տետրակը, ոչ միայն առանձին՝ այլև ընտանեաց՝ զաւակաց և աշակերտաց առջին՝ որ անոնքալ սորվին։ Տէր յա՛ն քա՛ ամենեցուն շնորհ և իմաստութի պարգևեսցէ, և յաւիտենական կենաց արժանիս արասցէ. Ամէն։

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՍԱՐԴԱՊԱՏՈՒԹԻՒՆ։

Հարցումն։ Սիրելի եղբայր՝ դու զինչ ես։
Պատասխանի։ Քառք այ, Քրիստոնեայ եմ։
Հարց։ Ի՞նչ բանով քրիստոնեայ եղար։
Պաս։ Աբ աւագանի շնորհաքը, երբ մը կըրտեցայ յանուն հօր և որդւոյ և հոգւոյն Սբոյ։
Հարց։ Քրիստոնէութե նշանն ինչ է։
Պաս։ Քրիստոնէութե արտաքին նշանն՝ երեսն խաչակնքելն է. իսկ ներքին նշանն՝ եղբայրսիրութիւն է։
Հարց։ Ի՞նչպէս երեսըդ կըխաչակնքես։
Պաս։ Այսպէս կըխաչակնքեմ. ձեռքս ճակատս կըդնեմ՝ ‖ յանուն հօր ‖ ըսե-

լով։ գօտիս վրա կը դնեմ՝ || և որդւոյ || ասելով։ կուրծքիս ձախ դին կը դնեմ՝ || և հոգւոյն || ասելով։ աջ դին կը դնեմ՝ || Տէր || ասելով։ սրտիս վրա կը դնեմ՝ || ամէն || ասելով։ ահա այս է խաչակնքելու կերպը։ Ուրեմն մեծ ամօթ է այն քրիստոնէին, որ երեսը խաչակնքելու կերպը շիտակ չը գիտէր։

Հարց։ Քրիստոնեայն քանի՞ բանով արքայութիւն արժանի կըլլայ։

Պատ։ Այս չորս բանովը։ որք են, հաւատք, յոյս, սէր, և բարեգործութի։

Հարց։ Ինչ բան է։

Պատ։ Ինչ արարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։

Հարց։ Ինչ քանի՛ է։

Պատ։ Ինչ մեկ է, էութիւն, բնութիւն, և զօրութիւն։ բայց երեք անձն է։ Հայր, որդի, և Տէր Հոգի։ և այս երեք անձինքս իրարմէ մեծ ու պզտիկ չեն։ աւելի և պակաս չեն։ այլ հաւասար մեկ Տրութի և մեկ իշխանութի ունին։

Հարց։ Այժ ուր տեղ է։
Պաս։ Այժ յամ տեղիս է։
Հարց։ Այսպա լինչու համար՝ ‖ հայր մեր որ յերկինս ‖ կըսենք։
Պաս։ Ըստ որում արքայութին յերկինս է, և այ սքանչելիքը հոն աւելի կերևնայ. և հրեշտակք և սրբց հոգիք հոն են. այն պատճառաւը՝ ասծ յերկինս է կըսենք։

Հարց։ Արիստոնէական հաւատքը քանի՞ մասունք կամ աստիճան ունի։
Պաս։ Տասներկու աստիճան ունի. որ սբ առաքեալները յերուսաղէմ քաղաքը սիոն վերնատունը՝ հաւատամքին մէջը յայտնի ըրին։
Հարց։ Եկեղեցին քանի՞ կերպ է։
Պաս։ Երեք կերպ է. Առաջինն է Յաղթող եկեղեցի. որ վերին եէմ, կամ արքայութի երկնից ալ կանուանի. քանզի հոն են սբերը, որք յաղթող դըտնըվեցան այս աշխարքիս վրա։
Երկրորդն՝ Օ լինուորեալ կամ բանական եկեղեցի. որ բարոյական մարմին քի՞ ալ

կանոնանի. և այս է Հին մէջ գրտնըված բոլանդակ Ճշմարիտ քրիստոնէից ժողովը. որոյ Ճշմարիտ գլուխն է ինքն քա։ Ան զինուորեալ անոր համար կըսվի. վա՞ղ մի՞շտ պատերազմ պիտի ընենք մեր հոգւոյն թշնամեացը հետ. որ այս երեքս են, մարմին, աշխարհ, և սատանայ։ Արդարդն՝ Լիւթական եկեղեցի. որ տա՞ճար ոչ ալ կանոնանի. ուր տեղ քրիստոնեայքս ոչ պաշտօն կը մատուցանենք։ Հարց։ Ինկեցոյ պատուիրանքը քանի՞ է։ Պաս։ Հինգ է. Առաջինն՝ նը կանոնաց սահմանած օրերը պահք պահել։ Երկրորդն՝ տէրունի օրերը, ինչպէս է կիրակին, և շաբթու մէջ պատահած կիրակի օրերը՝ մարմնաւոր գործքերէ հետ կենալ, ու հոգևոր գործոց պարապիլ՝ ոպի է կանուխ ժամ գնալ, նը պատարագ տեսնալ, քարոզ լսել։ Երրորդն՝ երկար ժամանակ առանց խոստովանուելի մնալ։ Չորրորդն՝ նը հաղորդութի առնուլը չի ուշացունել. գոնէ ծնունդին, զատկին, և նը ամանին, քի նը

մարմնոյ և արեանը խոստովանութիւն հաղորդիլ։ Հինգերորդն՝ տարեկան վաստակին տասանորդը հոգևոր բաներու համար յօժարութիւն տալ։

Հարց։ Քանի՛ օրէնք տրվաւ ՀԱԾ, և ինչ են։

Պատ։ Տասը օրէնք տրվաւ ՀԱԾ մովսէսի, և սոնք են. Առաջինն՝ ես եմ քո Տէր ՀԱԾԸԴ. ջըլլա որ ուրիշին ՀԱԾ ըսես։ Երկրորդն՝ կուռք մի՛ շինէր. և անոնք մի՛ պաշտեր։ Երրորդն՝ շաբաթ օրերը սբ պահէ. որ սբ առաքեալքները շաբաթը 'ի կիրակի փոխեցին. ըստ որում քա՛ 'ի կիրակի օր յարեաւ 'ի մեռելոց։ Չորրորդն՝ հայրըդ մայրըդ պատուէ։ Հինգերորդն՝ մի սպանաներ։ Վեցերդն՝ մի՛ շնար։ Օթներորդն՝ մի՛ գողանար։ Ութերորդն՝ մի՛ սուտ վկայեր։ Իններորդն՝ սուտ տեղը մի՛ երդնուր։ Տասներորդն՝ օտարին կնոջը կամ տանը, կամ անոր ունեցած բաներուն ամենին մի՛ ցանկար։

Հարց։ Պաշտամունքը քանի՞ բանով կը կատարի։

Պաս։ Երեք բանով. ՝ի աղօթիւք, պահօք, և ողորմութիւն։

Հարց։ Աղօթքն ինչ է։

Պաս։ Աղօթքն է պտուղ սրտի և բերանոյ. որով մեր կարօտութիւնը ՝ի կը յայտնենք, ու անկէց ողորմութիւն կը խնդրենք։

Հարց։ Պահքը ինչ է։

Պաս։ Պահքն է՝ միսէ, իւղէ, ձուկէ, և ասոնց նման կերակուրներէ հեռու կենալ՝ այն օրերը, որ սբ եկեղեցին կանոներէ։ Սակայն այս արտաքին պահք է, ասոր հետ 'ի միասին ներքին պահք ալ պէտք է, որ է օրինաց պահպանութիւնը։

Հարց։ Ողորմութիւն ինչ է։

Պաս։ Ողորմութիւնը՝ կարօտելոց օգնութիւն ընել է. և այս է երկու կերպ, մարմնաւոր և հոգեւոր։

Հարց։ Մարմնաւոր ողորմութիւնը քանի՞ է։

Պաս։ Եօթն է. ՝ի՝ քաղցածը կերակրել. ծարաւին ջուր տալ. մերկը հագուցանել. օտարը՝ տուն տանիլ. հիւան-

դին տես երթալ. բանտարկեալը երթալ մխիթարել. տէր ջուներցող մեռելը թաղել։

Հարց։ Հոգևոր ողորմութիւնը քանի՞ է։

Պատ։ Լօթն է. ՝՝՝

ներողութիւն։ և այս քրիստոնէի յատուկ չորս առաքինութիւնքն՝ բարոյական խաչն է։ ինչպէս քրիստոնէական գործոց մէջը պիտի խօսինք։

Հարց։ Պ՞եղքը քանի՞ կերպ է։

Պաս։ Երկու։ սկզբնական և ներգործական։

Հարց։ Սկզբնական մեղքն որն է։

Պաս։ Անհնազանդութիւն մեղքն է, որ ադամ նախահայրէն մեզի կիջնայ։ և այս նոր մկրտութիւնը կը քաւի։

Հարց։ Ներգործական մեղքը որն է։

Պաս։ Ներգործական մեղքն է, որ մենք խորհրդով, կամ բանիւ, կամ գործով՝ այդ դէմ կը մեղանչենք։ և այս ապաշխարութիւնը նոր խորհրդովը կը քաւի։

Հարց։ Ներգործական մեղքը քանի՞ կերպ է։

Պաս։ Երկու կերպ է, ներելի և մահացու։

Հարց։ Ի՞նչ է ներելին, և ինչ է մահացուն։

Պաս։ Ներելին է՝ բնութիւն թեթև մեղքն, որ չգիտութիւն և տկարութիւն

կը գործեմք։ Իսկ մահացու կամ մեռ-
ցունող՝ է այն ծանր մեղքն որ գիտու-
և կամօք կը գործենք։

Հարց։ Մահացու մեղքն քանի՞ են։

Պատ։ Գլխաւորքն եօթն են, ՝ի, հը-
պարտուի, նախանձ, բարկուի, ծու-
լութի, ագահութի, որկրամոլուի, և
բղջախոհութի։

Հարց։ Ասոնց դեղ ըլլալու առաքի-
նութիւնները որոնք են։

Պատ։ Այս եօթն են, ՝ի, խոնարհուի,
բարեհաճուի, հեզուի, առատաձրտուի,
արիուի, պահեցողուի, և ողջախոհուի։

Հարց։ Քանի՞ բան է, որ մարդս անոնք
միտք բերելով մեղքէն ետ կը կենայ։

Պատ։ Չորս բան է, ՝ի, անհրաժարելի
մահ, ահեղ դատաստան, ահագին դը-
ժոխք, և անձառելի արքայուի։

ՄԱՍՆ · Բ։

Քրիստոնէական գործք։

Այս Քրիստոնէուն առաջին համարը
սորվեցար. որ թէ մեկը քեզի հարցունէ,

Աղբայր իմ սիրելի, Դու զինչ ես։ Պատասխանի տաս, Թառք այ՝ քրիստոնեայ եմ։ Այս խօսքով անունդ յայտնեցիր. բայց տեսանենք՝ արդեօք գործքդ ալ անունիդ յարմար է. վասն զի սոսկ անունով քրիստոնեայն փրկութիւն չի հասնիր։

Ինչ ընեմ այդ դրախտին ծառ անուանելդ, որ պտուղ չունիս. կամ երկնից աստղ անուանիլդ՝ որ լոյս չունիս։ Զի գեւոր ծառ կամ աստղ կանուանիս, վասն զի քրիստոնեայ ես, բայց պէտք է որ բարեգործուն պտուղ կամ լոյս ալ ունենաս։ Բանզի անպտուղ ծառը կը կըտրըվի. * կտրեա՛ զդա, ընդէր և զերկիրդ խափանէ. || զՍուկ. ԺԳ. 7։ Անլոյս աստղը՝ երկինքէն վար կիյնա. * աստեղք յերկնից թօթափեացին. || Մատ. ԺԴ. 25։ Բանզի քրիստոնէական վարդապետութիւնը միայն գիտնալով յաղթայուն չերթըցվիր. այլ պէտք է որ բարեգործութի ալ ունենամք. ըստ՝ ինչ կըսէ Յակոբոս առաքեալը. * Հաւատք առանց գործոց մեռեալ են. || Յակ. Հմտ. Բ. 26։

Հապա սիրելի որդի՛ Ջանք ըրէ անու-
նիդ յարմար բարեգործութի՛ ունենալ.
որ փրկութե՛ Հաանիս , և երկնից ար-
քայութե՛ արժանի լինիս ։

Եղբայրսիրութի՛ ։

Քրիստոնէական գործոց մեծ և ա-
ռաջինը եղբայրսիրութի՛ն է . քրիստոնեայ
մը եթէ եղբայրսիրութի՛ չունենայ , ու-
րիշ բարեգործութիւներ ալ չի կարեր ու-
նենալ . ինչպէս տղայ մը եթէ քերական
չի սորվի , հեգերէն կամ աղմոս չի կա-
րեր սորվիլ ։

Յոհաննէս աւետարանիչը միշտ սէր
կը քարոզէր . օր մը աշակերտները ըսին
իրէն, Հայր ո՞ւ՝ միշտ սէր կը քարոզես. ու-
րիշ առաքինութե՛ վրա բանմը չես խօսիր ։
Պատասխան տրվաւ անոնց , ու ըսաւ.
սիրելի որդեակք իմ՝ սէրը պատուիրան
տն է , սէր եղած տեղը՝ ամէն բարե-
գործութի՛ կատարեալ է ։

Ու իրաւ է այս. վ՞ր զի քրիստոնեայ մը
եթէ եղբայրը սիրէ , անոր ինչա չի տար .

անունը էի բամբասեր. սիրտը էի կոտրեր. ապրանքը էի գողնար, կամ էի յափշտակեր. անոր յանցանքին կը ներէ. մեկ խօսքով՝ անոր ցաւին ցաւակից կը լլայ, և ուրախութիւնը ուրախակից. Տեսար եղբայրսիրութիւնը ինչպէս ուրիշ առաքինութիւնց ալ պատճառ եղաւ։

Այսոր հակառակ՝ մեկ քրիստոնեայ մը եթէ եղբայրսիրութի՛ չունենայ նէ, շատ կերպ չարութի՛ և վնաս կը գործէ ընդէմ եղբօրն. վարկումը (՝ խիթիպարը) կը կոտրէ վաճառականին քովը. առուտուրը կաւրէ՝ ապրանքը վար զարնելով. կը գողանայ ինչքը. անիրաւ զրպարտութի՛ կընէ վրան. բռնաւորաց կը մատնէ. ասոնք ամէնն ալ եղբայրատեցութիւն կը յառաջանան։ Այնոր համար յօհաննէս աւետարանիչը կըսէ թէ, եղբայրասէր չէ զողը՝ ՝՝ճծասէր ալ չէ. * Այթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զՁՃ, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է։ որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զՁՃ զոր ոչն ետես՝ զիարդ կարիցէ սիրել. || 1 յոհ. դ. 20։

Երբ կը տեսնայ ած որ դու եղբօրդ հետ ատելութիւն ունիս, ու ածսիրուն նշաններեր ցոյց կուտաս, քո սիրդ չի ընդունիր։ Վա՜ զի ինքն քեզ ած նբ աւետարանին մէջը կը հրամայէ. * Երթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերս սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. և երթ նախ հաշտեսց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։ || Մատ. Ե. 23։

Այս բանս միայն քահանայից համար ասուած մի՛ իմանար, այլ ամ քրիստոնէից համար. վա՜ զի ժողովուրդն ալ իւր քրիստոնէութեը վայելուչ պատարագ ունի. պատարագ է աղօթք ընելդ. պատարագ է պահք պահելդ. պատարագ է ողորմութիւն տալդ. և ինչ բարի բան որ այ սիրոյն համար կընես, այն ամ պատարագ կամ նուէր այ կը կոչվի։ * Պատարագ այ հոգի խոնարհ. || Սաղ. Ճ. 19։

Ուրեմն աղօթք ասկսելու ժամանակդ՝

Գրս. Բիբլիոթեկա

միտքդ ինկաւ որ՝ այս ինչ եղբօրդ կամ դրացւոյդ՝ կամ աղգականիդ՝ կամ օտար մեկի մը պատճառ ես տալիր՝ որ քեզի խռովեր է , պէտք է որ աղօթքդ թողուս , երթաս անոր հետ հաշտվիս . յետոյ գաս աղօթքդ ընես ։ Ա. յսպէս իմացիր նաև ուրիշ բարեգործութիւններու համար . ապա ամենէն աւելի ջանք ըրէ որ եղբայրասէր լինիս ։

Խոնարհութիւն .

Եղբայրսիրութիւն՝ խոնարհութիւն է քրիստոնէական գործ . ինչպէս սատանայն հպարտութիւն նշան կը դնէ իր ծառաներուն վրա , որով կը ճանաչվին թէ սատանայի ծառայ են . ասոր պէս ալ քրիստոնէն նշան կը դնէ խոնարհութիւն՝ քրիստոնէից վրա . որ անով կը ճանաչվին թէ քրիստոսի ծառայ են ։

Ուրանց խոնարհութիւն գործված առաքինութիւնները խաղտուտ են . վասն զի խոնարհութիւն ամենէն առաքինութեց հիմն և արմատն է . հիմն չունեցող շինուածը՝

հաստատուն չըլլար • արմատ չունեցող ծառը՝ չի բարձրանար։ Խոնարհութիւնէ՝ որ զմեզ 'ի վեր առ ած կը տանի • քանզի երբ կը տեսանէ ած մեր սրտին բեկումը և խոնարհութիւը՝ կը բարձրացուցանէ ըզ մեզ • ասոր համար կըսէ քա • * Որ խոնարհեցուցանէ, զանձն՝ բարձրացի՛ • || ղուկ • ժը • 14։ Եւ դաւիթ կըսէ • ած * զխոնարհս հոգւով կեցուցանէ • || սաղ• ղգ • 19։ Ապա որ կը փափագի յաւիտենական կենաց հասանիլ, եղբայրսիրութեամբ հետ խոնարհութիւն ալ պիտի ունենայ։

Ներբողեան։

Պէտք է քրիստոնէին ներող ըլլալ յանցանաց ընկերին, ինչպէս գլուխն մեր քա եղաւ • որ երբ 'ի վեր խաչին էր՝ խաչահանուաց համար կաղաչէր առ հայր՝ ասելով, * Հայր՝ թող տուր՝ զի ոչ գիտեն զինչ գործեն • || ղուկ • իգ • 34։ Եւ հիմա և ես մեր մեղացը համար թողութիւն կը խնդրէ, ինչպէս պօղոս առաքեալը կը գրէ • * Քա՛ն՝ որ մեռաւն, մանաւանդ

թէ յարուցեալ իսկ է. և է ընդաջմէ այլ, որև բարեխօս ի՛նչ է վասն մեր. ‖ հռովմ. 34։
Ա. յայտնէս քեզ հարազատ ծառայն աբ ըստեփաննոս ալ կաղաղակէր առ ած վասն քարկոծողացն. * Ծը՛, մի՛ համարիր դոցա զայս մեղս. ‖ գործ. է. 59։
Այս այնքան հարկաւոր է քրիստոնէին այս ներողութիւնը, մինչ զի առանց սորա չի կրնար նաբ ներողութի գտնալ աստուծմէ. քանզի ասէ քա՝. * Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր. ‖ մատթ. զ. 15։
Այս այս խօսքով իբրու թէ ած մեզի հետ դաշն և պայման կը դնէ, (ը՝ խավլ կը նէ). եթէ ներեմք մեր ընկերին յանցանքը՝ որ մեզի դէմ ըրեր է, ած ալ մեր յանցանքը կը ներէ. և եթէ չի ներեմք, ինքն ալ չի ներէր։ Ուստի պէտք է որ փոխոխակի ներողամիտ լինիմք միմեանց։

Համբերութիւն։

Համբերութիւն համար պօղոս առաքեալը կըսէ. * պիտոյ է ձեզ համբերութի.

զի զկամս այլ արարեալ հասցի՛ք աւետ-
եացն։ || Եբրայ. Ժ. 36։ Ա՛ զի ինչպէս
աբերը նեղուէ համբերելով աւետեաց հա-
սին. ասոր պէս մենք ալ եթէ համբե-
ռեմք՝ նոյն աւետեացը կըրնանք հասանիլ։

Հողագործը շատ կերպ նեղութեան
կը համբերէ անցաւոր բարեաց համար.
ձմերան ցուրտը և ամռվան տաքը ա-
ռանց դժգոհութե կը տանի, որ երկրին
բերքը վայելէ. ինչպես յակոբ առնեղբայրն
կըսէ. *ահա մշակ երկայնամտեալ ըս-
պասէ պատուական պտղոյն երկրի. || Յակ.
Ե. 7։ Ապա որչափ առաւել պէտք
է մեզի անանց և յաւիտենական բար-
եաց համար՝ ժամանակաւոր նեղութե և
վշտաց աշխարհիս համբերել. միշտ անմ-
ռաց մտքերնուս մէջը ունենալով քի այն
խօսքը, թէ *որ համբերեացն 'ի սպառ,
նա կեցցէ՛. || Մատթ. Ի՚Դ. 13։

Ուրեմն քրիստոնէի յատուկ եղած այս
ջորս առաքինութիները՝ պէտք է որ ամէն
քրիստոնեայ ունենայ. վասն զի ասոնցմով
կը շինվի բարոյական խաչ. որոյ վերին

ծայրն է սէր. պատուանդան՝ խոնարհ-
հութի. ձախ թև՝ ներողութի. և աջ թև՝
համբերութի. և այն ժամանակը կը կա-
տարի քի խօսքը՝ որ կըսէ. * Եթէ ոք՝
կամի գալ զկնի իմ, ուրացի՛ զանձն
իւր, և բարձցէ զխաչ իւր՝ և եկեսցէ՛
զկնի իմ. ‖ Մարկ. Ը. 34։

Հնազանդութիւն։

Քրիստոնէական հնազանդութիւնը այն-
քան պիտանի և օգտակար է որ, մինչ զի
քա՛ տրն մեր՝ իւր օրինակովը մեզի սոր-
վեցընել ուզեց։ Ա՛ զի ինքն հնազանդ
էր ոչ միայն իւր յաւիտենական հօրը,
այլ և հնազանդ էր մօր իւրոյ ամենաաբ-
կուսին, նաև պաշտպանին իւրոյ աբեյն
Յովսէփայ. * Եվ ընդ նա, և գնաց՝ ի նազա-
րէթ. և էր նոցա հնազանդ. ‖ Ղուկ. Բ. 50։
Տե՛ս միանգամ, եթէ մեր տրը և ածը
յա՛ քա՛ կը հնազանդի. ապա քանի՞ առա-
ւել մենք պիտի հնազանդիմք. նախ՝ ոյ
հրամանին. երկրորդ՝ աբ եկեղեցւոյ
կանոնաց. երրորդ՝ վիճակի առաջնորդին

և յատուկ խոստովանահօրն . ջորրորդ՝ ծնողաց և վարպետաց : Այ՛ն կոչ քով, ամենն պզտիկ իւր մեծին պէ՛տք է հնազանդիլ, ինչպէս առաքեալը կը պատուիրէ ասելով . * Ամենայն անձն որ ընդ իշխանութիւն է , 'ի հնազանդութեան կացցէ . || հռոմ . ԺԳ . Ի :

Ծնողք :

Հայրք և մայրք թէ կուզեն զաւակնին իրենց հնազանդ ըլլան , պէ՛տք է որ՝ իրենք ալ այ օրինաց և աբ եկեղեցւոյ կանոնաց հնազանդ գըտնըվին : Ադամ նախահայրը դրախտին մէջ որքան ժամանակ այ հրամանին հնազանդ մնաց , ամենն կենդանիները իրեն հնազանդ էին . և երբ ապստամբեցաւ աստուծմէ՝ կենդանիներն ալ իրմէ ապստամբեցան :

Այս ինչ ըրէք օրհնեալ ծնողք , որ դուք նախ հնազանդութիւն ունենաք այ՝ և աբ եկեղեցւոյ նը . և լինիք հեզ , խոնարհ , պարկեշտ , աղօթասէր , ողորմած , պահեցող , և ամ առաքինութիւն զար-

դարեալ . ոչ զի ձեր զաւակներն ալ ձեզի նմանին , և ձեզ հնազանդ լինին .
Որպէս է , * եամ ծառ բարի՝ պտուղ բարի առնէ . || Մատ . Է . 17 : Որուք ոմ ծնօղք՝ բարի ծառ կըլլաք , երբ մըտքերնիդ ու սրտերնիդ մաքուր պահէք , որ չար բան չի խորհի . բերաննիդ մաքուր պահէք , որ հայհոյութիւն , բամբասանք , և առասպել խօսք չի խօսի . ականջնիդ մաքուր պահէք , որ չար խօսքերու մտիկ չընէք . աչքերնիդ մաքուր պահէք , որ գեղի չի նայի , յորմէ մեղք կը ծնանի :
Լսէ՛ք ո՞ր ուրն մեր Քրիստոս . * եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ , խլեա՛ զնա՝ և ընկենա՛ ՚ի քէն . զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ , և մի՛ եամ մարմինդ քո անկանիցի ՚ի գեհենն . || Մատ . Է . 29 : Ապաշխարութեան համար :
Բրիստոնեայն՝ ամէն զղջայարանօքը մաքուր պիտի ըլլայ ամէն ժամանակ և ամէն տեղ . մանաւանդ իրէն զաւակաց

և ընտանեաց առջևը։

Այ այն ծնողացը՝ որ իրէնք ջար են. հազար վայ անոնց, որ իրէնց զաւակաց քովն ալ ջարուի կը գործեն. զոր օրինակ փարայով թուղթ, թավլու, կամ այլ կերպ խաղ կը խաղան, որ խումարպազուի ըսել է. կամ ջափէն աւելի գինի խմելով կը գինովնան. և կերպ կերպ հայհոյութիւններ կընեն. և կամ այր և կին իրարու հետ կը կռուին, և մեկզմեկ կատեն. ասոնց խեղճ զաւակներն ալ՝ իրէնց ծնողաց ջար վարքը տեսնալով կը սորվին, և իրէնք ալ ջար կըլլան. վա՜ զի ինչպէս բարի ծառը՝ բարի պտուղ կը բերէ, այսպէս ջար ծառը՝ ջար պտուղ կը բերէ։

Լա՜ւ խմացէք, որ զաւակ ջունեցող մարդը եթէ գեշ ըլլայ նէ, ինքը մինակ կը կորնչի. բայց զաւակաց տէր եղողը եթէ գեշ ըլլայ, իրէն հետ իր զաւակներն ալ կը կորսընցընէ։ Վա՜ զի հայրը ու մայրը իրէնց զաւակացը հայելին են. զաւակները ինչ որ տեսնան ծնողացը վրա,

իրենք ալ անիկա կը գործեն։
Այսպես դուք բարի՛ ծնողք՝ խնայեցեք ձեզի ալ՝ ու ձեր զաւակացն ալ. բարի օրինակ եղիք անոնց։
Քանի՛ որ չարն ու բարին չեն սորված, ջանք ըրեք բարին սորվեցընել. անոնց լեզուն բացվածին պէս, || յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն || ըսել սորվեցուցեք. և ձեռքերնին բռնելով՝ երեսնին խաչակնքել տրվեք։ Զաւակաց քովը Հայերէն խօսեցեք, որ նախ և յառաջ իրենց Հայրենի լեզուն սորվին։ Շատ աղէկ է որ՝ Հայազգի քրիստոնեայք իրենց մէջը միշտ Հայերէն խօսին. վնաս ալ այլազգերէն խօսելով, շատ տեղ Հայերէն լեզուն կորուսերէն. և եկեղեցւոյ մէջ իբրև օտարազգի կը կանգնին. կարդացմունքին միայն ձայնը կը լսեն, ամենևին բան չեն Հասկընար։
Այսպես դուք որ Հայերէն գիտէք, ջանք ըրեք որ չի մոռնաք. և ձեր զաւակացն ալ սորվեցընեք։
Ո՞վ ծնողք, զաւակնիդ երբ որ Հինգ

կամ վեց տարեկան կըլլայ, անպատճառ կարդալ տըվէք, որ իրենց հոգինին ու մարմիննին շահելու համար կարդալ գրել սորվին։

Կատարեալ ժամանակը չի հասած՝ արհեստի մի՛ տաք. վնասի անօգուտ է, չեն կարեր սորվիլ։ Հապա օգտակար է անոնց՝ տղայութիւն ժամանակը մարդավարութիւն ու կարդալ գրել սորվիլ. որ գլխաւոր և պիտվական արհեստ է։

Երանի՛ էր թէ, քերականութիւն կամ ուրիշ գիտութիւն ալ սորվեցընել տայիք ձեր զաւակացը. ու այնպէս քաղաքական արհեստի կամ առուտուրի մէջ խօթէիք. որ մոքերնին բաց կըլլար, և քիչ ժամանակի մէջ շատ բան կըընային սորվիլ։

Այս ըսածներըս պարտք է ձեզի օրհնեա՛լ ծնողք, ջանք ըրէք այսպէս ընել, որ պարտականութէն ազատիք։

Օ՛ԱՒԱՅՈՒՆ։

Ամէն համարս ձեզի՝ սողոմոն իմաստունին ըսածը թող ըլլայ. * Լո՛ւր որդեակ

խրատու հօր քո , և մի՛ մերժեր զօրէնս մօր քո . զի պսակ շնորհաց ընկալցի գլխուս քո . և մանեակ ոսկի 'ի պարանոցի քում . || ՊՍԱԿ . Ա . 8 ։

Այս օրհնեալ զաւակունք ջանք ըրէք՝ որ ձեր ծնողացը միշտ հնազանդ ըլլաք . անոնց խօսքէն դուրս չելլաք . անոնցմէ չի զատուիք . առանց ծնողաց հարցուներու բան մը չի գործէք . մինակ տեղ չերթաք։

Եթէ մանչ զաւակ ես նէ , հօրըդ հետ դրուներն դուրս ելիր , եթէ ժամ երթալու ես և եթէ խանութ . գեշ տղայոց հետ տեսութի՛ մի՛ ըներ . քովերնին մի՛ հանդիպիր . վրանին մի՛ նայիր ։

Եթէ աղջիկ զաւակ ես նէ , մօրմէդ մի՛ զատուիր . թէ ժամ թէ բաղնիք , թէ ուր որ լինի՝ մօրըդ հետ գնա . առանց մօրըդ՝ տանը դրուներն դուրս մի՛ ելաներ . դրացի աղջկանց հետ շատ տեսութի՛ մի՛ ըներ . մանչերուն հետ ամենևին տեսութի՛ մի՛ ըներ . խաղալիք (օյունճախ) բաներու մի՛ հետևիր . քեզի շատ զարդ (տիւզէն) տալու մի՛ նայիր . քո զարդերդ

ծնողացդ հնազանդ ըլլալն է, և քո պարկեշտութիւն է։ Եթէ այս բաներուս ընէք, այլ շնորհքը ձեր վրա կըլլայ։

Պարկեշտութիւն։

Պարկեշտութիւը առաւել կանանց պէտք է, բայց արք ալ թող մտիկ ընեն. վասն զի ինչպէս պարկեշտութիւը, նմանապէս և անպարկեշտութիւը՝ երկուքին ալ ընկերուն է։ Զի թէ այրը պարկեշտ է՝ փառք է կնոջն, և եթէ անպարկեշտ է՝ անարգանք է. ասոր պէս ալ եթէ կինն պարկեշտ է՝ փառք է առն, և թէ անպարկեշտ է՝ անարգանք է։ Արդ՝ օրհնեա՛լ կանայք՝ եթէ ձեր հոգւոյ փրկութիւը կուզէք նէ, լա՛ւ մտիկ ըրէք ինչ պիտի խօսիմ ձեզի։ Բրիստոնէի վայելուչ պարկեշտութիւը պէ՛տք է՝ որ ձեր կերպարանքին ու հանդերձին վրա պայծառ փայլի. ապա չը լինի՝ որ այլ ըստեղծած ձեր երեսին չի հաւնելով՝ կեր պարանքնիդ փոխէք ուրիշ հնարքներով. իմացէ՛ք որ այնպես ընողներուն՝ դատաստանի օրը քա՛ պիտի ըսէ, || ո՛չ գիտեմ զձեզ ||.

ապա կուզէք որ դիտնայ ու ճանաչէ, այ
ստեղծուած կերպարանքը հերիք համարեցէք։
Ամենապէս ջանք ըրէք, որ հանդերձ
նիդ ալ պարկեշտ ըլլայ. վրանիդ գը-
լուխնիդ կանանչ կամ կանանչի մօտ գու-
նով բան չի գրտնըվի. նորաձև հանդերձ
և սովորութիւն դուրս քէրաձէ մի հագնիք.
գլուխ կապելնիդ ալ պարկեշտ ըլլայ։
Դուրս ելած ժամանակնիդ, թէ եկեղե-
ցի, թէ բաղնիք, և թէ այլ տեղ երթալու
լինիք, քալվածքնիդ ու շարժմունքնիդ
կարգաւ և պարկեշտութիւն ըլլայ։ Եկե-
ղեցւոյ մէջ ուրիշի հետ մի՛ խօսիք, բամ-
բասանք մի՛ ընէք. միայն թէ՝ ուղիղ
դիտաւորութիւն աղօթեցէք։
Բաղնիք երթալն է, ոսկեղէն կամ
էլմասեղէն զարդ չի գրտնըվի վրանիդ.
վա՜ զի այդ ձեր զարդարվելովը՝ բովան-
դակ աղդերնիս կը բամբասվի։ Հասկը
ցէ՛ք ինչ կը սեմ. մենք հարկատու ռայէ
եմք, պէ՛տք է որ ռայէի յարմար հա-
գուստ ունենանք։
Այս ալ կը պատուիրեմ ձեզի, հետերնիդ

եփած կերակուր , գինի , ռակի , կամ կերպ կերպ սիրտ ուզելու հազուագիւտ բաներ չի տանիք ։

Ա՛ զի աղքատն որ չունի , ձեր ուտելը և խմելը կը տեսնայ՝ սիրտը կուզէ . գի՛տէք որ՝ ասկից հոգեկորուստ բան կը ծնանի . դուք ալ քիչմը ուտեմք խմեմք ըսելովն իդ՝ մարդասպան կըլլաք։ Ուրեմն բաղնիք երթալն է , մինակ հաց ու լիմոն այն օրը ձեզի բաւական է . երբ որ տուն դառնաք , այ պարգևը հոն վայելեցէք չափով ։

Յիրաւի՝ կանանց այլևս շատ բան կայ խօսելու , սակայն կը թողում որ իրենց խոստովանահայր քահանայքը խօսին . միայն թէ այս մեկը շատ հարկաւոր ըվալ լուն պատճառաւը , հարկ է խօսիլ ։

Ամանք անմիտ կանայք՝ երբ որ ցաւի մը կը պատահին , կամ կորուստ մը կունենան , իսկոյն կախարդի , դարի ձգողի , և այլ այսպիսի խաբեբաներու դուռը կը վազեն . ասով՝ այ դուռը կը թողուն , սատանայի դուռը կը ջալեն ։

Ոչ՝ ին խաբեբաներըը՝ եթէ ձեռքերնուն բան կուգայ , հապա ինչու քու մեկ քանի փարայիդ կարօտ են մնացեր . դուն ալ անմտութիւն կերթաս անոնց կը խաբվիս . բժշկութիւն կը փընտրուես նէ՝ քու ստեղծողէդ խնդրէ. ճշմարիտ քրիստոնէից բժիշկը՝ քո՞ է . դեղ՝ նոր աստուածաշունչն է , կամ նոր կենաց փայտ , և կամ նոյց մասունքներն են ։

Ոչ՝ ասոնք ըսելովս՝ չեմ ըսեր թէ վարպետ բժիշկ բերել մի՛ տար , կամ դեղ մի՛ առներ . վա՜ զի օրինաւոր բժիշկներուն շնորհք , և դեղերուն զօրութիւն տրվողը՝ աստ է . միայն թէ խօսքըս անոնց է , որ նոր եկեղեցին կարհամարհեն , և սատանայական բաներու կը հետևին . դու որ բարեպաշտ քրիստոնեայ ես , այնպիսի խաբէական գործքերէն բոլորովին հեռի կեցիր ։

Այց որովհետև մարդ ես , հիւանդութիւն կըընայ պատահիլ քեզի . այն ժամանակը յառաջ քահանայն կանչէ , կատարեալ խոստովանանք եղիր , հաղորդ

առ. ինչ դիտես՝ դուցէ հիւանդութիւն մեղաց համար է. երբ որ մեղքէն ազատիս՝ հիւանդութիւն ալ վրայէդ կերթայ։ Հոգևոր պաշտօնէդ հոգալէդ ետև, բժշկի ալ ցոյց տուր քեզի. միայն թէ կախարդութիւն մի՛ հանտրպցընէր քովդ, ու կախարդութիւն մօտ բաներ մի՛ ըներ։ Ինչպէս՝ աղբիւսի (ՅԷՓԼԻՒԿԻ)՝ կամ ծովու վրա աւետարան կարդալ տալ, շերպէթ թափել, նուսխայ պահել, և այլ այսպիսի խենդութիւնդ բաներ ընել. վա՜ղ այսպէս բաները՝ նբ հաւատոյ և եկեղեցոյ ընդդէմ է։

Վերջապէս ամէն մարդ թէ այր և թէ կին, թէ մեծ և թէ պզտիկ, այնպէս մտաց մէջը թո՛ղ դնէ, ինչպէս ատոյգն ալ այս է, այ ամենանբ աչքը՝ միշտ իմ վրաս է՝ ու զիս կը տեսնայ. ապա ջանք ընեմ որ այ առջևը պակասութիւն մը չունենամ։ Այս դիտաւորութիւնը պէ՛տք է որ ամէն ժամանակ ունենանք. բայց առաւել աղօթք ըրած ժամանակնիս։ Վա՜ղ աղօթք ընողը՝ ուր տեղ որ ըլլայ,

աղօթք ըրած ժամանակը՝ այ առջևը կանգ-
նած է. ուրեմն մեծ զգուշութի պէտք է՝
որ աղօթքնիս այ ընդունելի ըլլայ։

Ա. ՇՕՐ։

Արուվհետև մարդս այ ծառան է,
պէտք է որ իր ծառայ ըլլալը ճանչնա-
լով՝ այ ծառայութի ընէ։
Եւ մի թէ ամենակարող մեր ծա-
ռայութիւնը կարօտ է, քա՛ւ լեցի. մեր
մեկ բանին կարօտութի չունի. կըսէ
դաւիթ մարգարէին բերանովը. * Ո՛Չ
ուտեմ զմիս զուարակաց քոց, և ո՛չ զար-
լուն նոխազաց քոց ըմպեմ. || սաղ. խԹ. 13։
Հապա՝ ինչ կերպ ծառայութի պէտք է մե-
զի ընել. ահա՛ և այն խմացուց մեզի նոյն
մարգարէին բերանովը ըսելով. * Պատո՛
այ պատարագ օրհնութի՛ւն. || սաղ. խԹ. 14։
Օրհնութիւն պատարագը աղօթքն է, որ
ջերմեռանդ սրտիւ այ կը մատուցանենք։
Յիրաւի ածմեր մեկ բանին կարօտ չէ.
սակայն մենք ապերախտ չի մնալու հա-
մար՝ մեր աղօթք ընելը կուզէ։

Աղօթքը երեք կերպ է, ինչպէս որ Յա-
կոբ մեծ-ինայ հայրապետը կըսէ, և սոնք
են. խնդրուածք, օրհնութիւն, և դոհութիւն։
Խնդրուածն այն է՝ որ մեղացդ թողու-
թիւն, կամ թէ այլ ինչ արժանաւոր
բան մը կը խնդրես յայ։
Օրհնութիւն այն է՝ որ զաստ կօրհնես՝ իրէն
կերպ կերպ պանչելի գործոցը համար։
Դոհութիւն այն է՝ որ շնորհակալ կըլլաս՝
քեզի ըրած երախտեացը համար։
Ասս հիմա սոնք քեզի չեմ կրնար տեղնի
տեղը հասկըցընել՝ այս համառօտ տետ-
րակին մէջը. միայն թէ այս քեզի կըսեմ,
դուն որ աղօթքը դիտես, այն ըսէ ա-
ղօթք կանգնած ժամանակըդ. այս ի-
րեքըս ամէն աղօթքի մէջ ալ կը գտնըվի.
թէպէտ դու չես հասկընար ըսած ա-
ղօթքդ, բայց ասոնք քու սիրտըդ ու քու
միտքըդ դիտէ, և քեզի պէտք եղածը
կուտայ. դու միայն պարկեշտօրէն ա-
ղօթք ընելըդ նայէ։
Աղօթքներուն գլխաւորը Հայր մերն է.
անոր ետևէն, Ընկանիմք առաջի քո.

Հաւատով խոստովանիմ . նմանապէս Սաղմոս , Ասրեկ։ Եւ ամէն ծնող պարտաւորուի ունին իրենց զաւակացը աստաղօթքներըս սորվեցընել , կամ սորվեցընել տալ։

Աղօթքի ժամանակ ե՛րբ է կըսես նէ , ամէն ատեն է . վա՜ զի քա՜ տրն մեր կըսէ .

* Պարտ է յամ ժամ կա՛ղ նց յաղօթս՝ և մի՛ ձանձրանալ . || ղ-ե . ԺԸ . I ։

Բայց այս բանս մի՛ այնպէս իմանար , որ թէ միշտ բանըդ գործըդ թո՛ղ տուր , ու աղօթք ըրէ . Հապա ըսել է թէ՝ ՝ այ աչ՝ ու երկիւղը միշտ սրտիդ մէջ ունեցիր , և ժամանակին ալ աղօթքըդ ըրէ ։

Ժամանակ աղօթքից ։

Աղօթքի ժամանակն այս է . մեկ մը պառկելու ժամանակդ՝ պէտք է որ կանգնիս աղօթք ընես , և գոհուի տաս ՝ այ . որ այն օրը քեզի ողջ պահեց , աւուր փորձանքներէն ազատեց , ու իրիկվան ժամանակին հասուց։ Այս ալ պիտի խնդրես որ, առաջիկայ գիշերվանը փորձանքներէն ալ

աղատէ , և առանց մեղաց պահելով՝ ա-
ռողջ մարմնով առաւօտուն հասցընէ ։
Այնմանապէս առաւօտուն քունէդ արթ-
ննաս նէ , յառաջ պէտք է երեսդ խաչ-
ակնքես . և գիտցած աղօթքներդ զուր-
ցելով՝ լաթերդ հագնիս , ու եկեղեցի
երթաս . եթէ չես կարեր երթալ նէ ,
տունը աղօթէ ։ Սակայն այր մարդիկ և
տարիքը առած կանայք՝ պարտաւորուի
ունին ամէն օր եկեղեցի գնալ , մանա-
ւանդ կիրակի ու տօն օրերը ։
Ամացած ըլլաք , մեկ մարդ որ հիւանդ
էր , բանտի մէջ էր , երկար ճանապարհ-
որդուն մէջ էր , եկեղեցի էի գրտնը-
ված տեղ էր . հապա անձամբ առողջ է ,
և գրտնըված տեղը եկեղեցի կայ , գոնէ
կիրակի ու տօն օրերը եկեղեցի չերթայ ,
և իւղաբերից աւետարանի ձայնը էի լը-
սէ , նաև Տէր անմահ պատարագը կա-
տարեալ էի տեսնայ , այնպիսին ծանրա-
պէս կը մեղանչէ ծուլութեամբ մեղք ։
Ա՛ զի ճշմարիտ քրիստոնեաները ան ա-
տենը եկեղեցոյ մէջ հրեշտակաց նման

զանձ կը փառաբանեն. ու ինքը ծուլութ
պառկած է, իմ ելեր իր գործը կը գործէ։
Այսոնցմէ շատ դեշ են անոնք, որ եկեղե
ցոյ ժամանակը խահվէի կամ պէրպէռի
խանութի մէջ քէֆ չաթիշ կընեն. այ
պաշտօնը իրէնց քէֆին հետ կը փոխեն.
ասոնք չէ թէ միայն իրէնց հոգւոց կո
ղբստեան պատճառ կըլլան, հապա բո
լոր հայոց ազգիս նախատինք կըլլան։
Վա՜ զի ուրիշ ազգերը կը տեսնան որ,
հայոց ազգէն շատ մարդիկ աղօթքի ժա
մանակ խահվէնեերը ու պէրպէռի խա
նութները լեցվեր են, բոլոր ազգը կը
նախատեն, ինչպէս շատ անգամ լսված է։
Վա՜յ այնպիսի լոկ անուամբ քրիստոնէից.
և առաւել վայ անոնց՝ որ այս բարի խը
րատները լսելով՝ չեն զգաստանար։

Բայց դու՝ որ բարեպաշտ քրիստոն
եայ ես՝ հայրաբար կը խրատեմ զքեզ.
առաւօտ երեկոյ աղօթքիդ ժի՛ր կացիր.
ամէն օր՝ մանաւանդ շաբաթ ու կիրակի
օրերը եկեղեցիէն ետ մի՛ մնար. կանուխ
եկեղեցի դալու ջանք ըրէ. և մինչև աք

անմահ պատարագի օրհնութեամբ մասը չառնեա նէ, եկեղեցիէն դուրս մի՛ ելաներ։ Օ՛ աւակ, թոռն, փոքր եղբայր, կամ աշակերտ ունիս նէ հե՛տըդ տար, քովըդ կանգնեցուր. եթէ ձայնը գըրված տղայ չէ նէ, մի՛ թողուր որ դասը երթայ, ու քահանաներուն կամ տիրացուներուն նեղութի տայ, ճծային ժամերգութիւնը խափանէ, և շնորհք առնելու տեղը պատիժ առնու։ Հապա պարկեշտօրէն քովըդ կանգնեցուր, որ քեզի հետ աղօթք ընէ, և անոր բարի օրինակ եղիր։ Դուալ որ ժողովուրդ ես՝ տիրացու չես՝ դասը մի՛ կանգիր, վա՜զ դասը միայն աստիճանաւորաց տեղէ։

Օ՛ դո՛ւշ կեցիր, չըլլայ որ եկեղեցոյ մէջ ամուր ձայնով աղօթք ընես, ու քովըդ կանգնողին միտքը պղտորես. հապա մըտքըդ աղօթք ըրէ, որ միայն ճծ լսէ։

Եկեղեցի գնալու կերպ։

Տանըդ դրուռնէն ելած ժամանակըդ՝ երեսդ խաչակնքէ, ու դիտցած աղօթք-

ներբդ ասելով՝ որքան կարես արտորա՝
նօք և հոգևոր ուրախութիւն եկեղեցոյ
ճանապարհը քալէ։ դաւիթ մարգարէին
պէս ասելով։ * Ուրախ եղէ ես ոյք ա՝
սէին ցիս, 'ի տուն տ'ն երթիցուք մեք։ ||
սաղմ։ ճիա։ 1։

Երբ եկեղեցոյ ներսի դուռը հաս՝
նիս, գբլուխդ բա՛ց, ու փափագանօք
քովի շէմը՝ ուր տեղ որ տ՝ բ խաչի նշան
կայ՝ համբուրէ։ և ապա ասէ։ * Ա՝յլ ես
ասա բազում ողորմութիւն քում մտից 'ի
տուն քո։ երկիր պագից 'ի տաճար տ՝ բ
քո երկիւղիւ քո։ || սաղմ։ Ե։ 8։ Ա՝ւ
երեք անգամ ծնրադրութիւն ասէ։

Յետոյ մինչև ժամ օրհնելու ժամա՝
նակը՝ մտածական աղօթքդ ասէ։ ջանայ
որ քովդի կանգնողներուն բարև տաս
ասելով, Բարի աղօթեա։ Ա՝ զի մար՝
դավարութիւն չէ՝ մարդ մը թագաւորի
առջև կանգնած ատենը քովիններուն
բարև տայ, ու հետերնին խօսի։ Հապա
դուն՝ որ երկնաւոր թագաւորի առջևը
կանգնեցար, ամենևին քեզի պէտք չէ

որ քովիններդդ Ճանչնաս, ու անոնց հետ խօսակցութիւն ընես. միայն թէ եկեղեցոյ մէջ քո խօսակցութիւդ ալ հետ պիտի լինի։

Երբ աղօթք կընես, դու ալ հետ կը խօսիս. և երբ սբ աւետարան մտիկ կընես, ալ քեզի հետ կը խօսի. ապա զգուշ կեցիր՝ որ եկեղեցոյ մէջ ամենևին չի խօսիս՝ ոչ քիչ և ոչ շատ. աս դին ան դին ալ չի նայիս. միայն թէ քու աչքդդ դէպի սբ սեղանը ըլլայ. վասն զի մարդուս աչքը ուր է նէ, միտքն ալ հոն կըլլայ։

Հրաժարիմքի ժամանակ՝ երբ որ դէպի արևմուտք պիտի դառնաս՝ աջ կողմդդ դարձիր, և ձեռքերդդ կոր բռնէ. նմանապէս կրկին արևելք դառնալու ըլլաս նէ, աջ կողմդն դարձիր, ու դըլուխդդ բաց, և երկու ափդդ իրարու քերելով ըսէ մտքդդ, Խոստովանիմք և հաւատամք, և այլն։

Որ գտնըվին ոմանք՝ որ Հրաժարիմքը ըմբնցած ժամանակը, կամ Ասկ ողբ ասենին վերջը՝ ձեռքերնին կը թօթվեն, և ոմանք ալ ժամն ելլալու աստենը կը

ծուին , երկու ձեռքերնին դեռինը կը դրպցընեն , ու վերջը երեսնին ու մոռոքնին կը քսեն . և երկու կողմը կանգնողներուն բարև տալու պէս՝ || ողորմի ՝ծ || կըսեն . որ շատ աւելորդ , անշընորհք , և ծաղրական արարմունքներ են . դու զգուշ կեցիր , այսպէս անվայել արարմունքներ մի՛ ըներ ։

Ողջունի ժամանակը՝ ողջոյն տրվողը պիտի ըսէ , || Ո՞ ՝ի մէջ մեր յայտնեցաւ || . իսկ ողջոյն առնողը պիտի ըսէ . || Օրհնեալ է յայտնուին քի || . այլ ուրիշ բան մի՛ ըսեր ։

Ամանապէս թէ առաւօտեան և թէ երեկոյի ժամուն եկեղեցիէն արձակման ժամանակը՝ ՝նբ աւետարան, ՝նբ խաչ, կամ ՝նբ մատունք համբուրելու երթաս նէ , պարկեշտութիւն և բաց գլուխ գնա , և համբուրելու ատենը || մեղայ ՝ոյ || ըսէ . քահանան ալ քեզի կըսէ՝ || ՝ծ թողուի շնորհեսցէ || ։

Բայց գիտնալ պէտք է որ՝ այս թողուիը ներելի մեղաց համար է . գթած մայրն

մեր ՝ն՝ եկեղեցի այսպէս սահմաներ է որ , ՝ն՝ աւետարան կամ քահանայի աջը համբուրելով՝ մեր գործած ու մոռցած կամ փոքրիկ մեղքերուն թողութիւն լինի ։

Նմանապէս կարգաւ և պարկեշտութիւն երթալու է ՝ն՝ Ննդեան օրը՝ օրհնեալ ջուր առած ժամանակնիս . և ս առաւել ՝ն՝ հաղորդութիւն առած ժամանակնիս՝ պէտք է որ ահիւ և երկիւղիւ յառաջ երթանք , ոչ թէ մենք արժանի չենք , և յառաջ երթալու չենք համարձակիր , ՝ն՝ զմեզ կը կոչէ ։

Բայց կան այնպիսի անխոհեմ մարդիկ , որ իրենք զիրենք ամենէն աւելի արժանաւոր համարելով՝ ջանք կընեն յառաջ անցնիլ , և ամենէն յառաջ սրբութիւն առնուլ . ոչ թէ ըսելով՝ ես ոչ եմ իբրև զայլս 'ի մարդկանէ . իբրու թէ քովը կեցողներուն կըսէ , ես ձեզի պէս մեղաւոր չեմ , ես արդար եմ , դուք մեկդի կեցէք . ես յառաջ սրբութիւն առնում, դուք վերջը առէք . թէպէտ այս մարդկանց միտքը այն չէ , բայց գործ-

քերնին այն է։

Սակայն դու որ բարեպաշտ քրիս-
տոնեայ ես՝ հոգևոր խրատս մտիկ ըրէ։
սրբութիւն առած օրերդ՝ կանուխ ալ ե-
կեղեցի գնա՝ , խոստովանահայրերդ գը-
տիր՝ արձակում ա՛ռ։ և յետոյ ջերմե-
ռանդութիւն աղօթքերդ ըրէ։ մաքսաւորին
ըսած աղօթքը շատ անգամ ըսէ։ * Ո՛Չ՝
քաւեա՛ զիս զմեղաւորս։ ‖ ղ-ւկ։ ԺԸ։ 13։
Եւ այսպիսի խոնարհութիւն դու արժա-
նի կըլլաս ալ հաղորդութիւն։
Ապա զգո՛ւշ կեցիր , ժամանակէն յա-
ռաջ դասը մի՛ մըտնար։ նայէ՛ որ դուն
ամէնէն վերջը հաղորդ առնուս։
Ա՛ռի դասի կողմէն նե՛րս մտիր , գը-
լուխդ բա՛ց։ փեշերդ վրայ բե՛ր։ ե-
բեսդ խաչակնքէ՛։ և ամ ջերմեռան-
դութիւն սրբութիւն ա՛ռ։
Յետոյ վերի դասի կողմէն դո՛ւրս ելիր,
բայց եկեղեցիէն դուրս մի՛ ելաներ։
մինչև Օրհնեալք եղերուքը կանգնէ,ու
աղօթք ըրէ և շնորհակալ եղիր , որ ար-
ժանի եղար դքա՛ սրտիդ մէջը ընդու-

նելու . և աղաչանք ըրէ որ ՆԾ զքեզ՝ի մեղաց հեռի պահէ , որ՝ի քնէ չի բաժանիս . և աղօթքիդ պատճառաւ եթէ եկեղեցոյ մէջ քիչմը ուշ մնաս նէ՝ հոգ չէ , վնաս զի քի սիրոյն համար է ։

Ուրոնոնքի ժամաչարգունքի , և խորհուրդ հոգոյ ։

Եկեղեցոյ մէջ մեկ օրը եօթն անգամ աղօթք սահմանված է , ինչպէս դաւիթ մարգարէն ալ կըսէ . * Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ . || սաղմ . ՃԺԸ . 164 ։

Առաջինն է՝ Գիշերային ժամերգութիւն . որ կըսկըսի , Տէր զի բազում էն , և կաւարտի մինչև՝ի Ճաք առաւօտուն ։ Այն ատենը պէտք է խորհիմք , որ քնի՝ի մէջ գիշերի ծնաւ՝ զմեզ փրկելու համար , և՝ի մէջ գիշերի յարեաւ՝ մեզի յարութիւն տալու համար . և՝ի մէջ գիշերի պիտի գայ՝ դատաստան ընելու համար . ինչպէս նոր աւետարանը կըսէ . * Ի՝ մէջ գիշերի եղև բարբառ , ահա փեսայ գայ արիք ընդ առաջ նոր . || մատ . իե . 6 ։

Ապա քրիստոնէից պէտք է, այս գիշերային ժամերգութեան ժամանակը՝ իմաստուն կուսանաց պէս արթուն ըլլան, հոգւոյ լապտերը վառեն, որ յիմար կուսանաց պէս արքայութէն դուրս չի մնան։

Երկրորդն է՝ Առաւօտեան ժամերգութիւն. որ կըսկսի, Լ ցաք առաւօտուէն, և կատարի մինչև Աղեցի անուն տն օրհնեալը։ Այն ատենը պէտք է խորհիլք, որ յառաւօտեան ժամէն սկիզբն արար ած այս նոր աշխարհ ստեղծմանը. ինչպէս ած աշխարհը կիմացուն է. * Եւ եղև երեկոյ՝ և եղև վաղորդայն՝ օր մի. || ծնունդ. ա. 5։ Եւ փրկիչն մեր յառաւօտեան ժամուն միշտ 'ի տաճարն կերթար. ինչպէս որ աւետարանը կըսէ. * Եւ ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առնա 'ի տաճարն լսել 'ի նմանէ. || ղուկ. իա. 38։ Սակէց յայտնի է որ՝ ինքն քր ամէն ժողովուրդէն յառաջ տաճարը կերթար։ Նաև զատկի օրը յառաւօտեան ժամուն երևեցաւ իւղաբեր կանանց. մեզի ալ կերևի՝ եթէ այն ժամանակին

աղօթքի կանգնիկ նէ։

Երրորդն է՝ Երևագալին ժամերգութիւն. որ կըսկըսի, Եղեցի անուն տն օրհնեալ էն, և կաւարտի մինչև 'ի Հաշուն։ Այս տեղ պէտք է խորհիլք, որ ինչպէս զգալի արեգակը իրէն ճառագայթը աշխարհիս վերայ կը ծագէ. նմանապէս իմանալի արեգակն քն՝ իւր շնորհաց լոյսը մեր սրտին մէջը կը ծագէ, եթէ այն ժամանակին աղօթքի կանգնիմք նէ։

Չորրորդն է՝ Հաշուին ժամերգուին. և է երեք Աղորմեայն։ Առաջին ողորմեայն է երրորդ ժամու աղօթք։ Այս տեղս պէտք է խորհիլք, որ մեր նախամայրն և այ յերրորդ ժամուն խաբվեցաւ, և այ շնորհքէն զրկեցաւ. և հոգին սբ ած յերրորդ ժամու իջաւ վերնատունը սբ առաքելոց վրա, և զայն կորուսած շնորհքը նորէն տվաւ. մեր վրայ ալ կիջնայ, և իւր շնորհքը կուտայ՝ եթէ այն ժամանակին աղօթքի կանգնիմք նէ։ Երկրորդ ողորմեայն է վեցերորդ ժամու աղօթք։ Այս տեղս պիտի խորհիլք, որ այս

վեցերորդ ժամուն մեր նախահայրը մեղանչեց, և՝ ի նոյն ժամուն քն տրն մեր խաչին վրայ բևեռեցաւ։ Երրորդ ողորմեայն է իններորդ ժամու աղօթք։ Այս տեղս պիտի խորհիմք, որ այս իններորդ ժամուն քն խաչին վր քացախ և լեղի խմեց, և աջակողմեան աւազակին դրախտը տրվաւ, նաև այն ժամուն իւր ամենաւոր բանական հոգին հօր այ ձեռքը աւանդեց։ Այս բաներս մեզի կը սորվեցընէ նբ Ներսէս շնորհալին՝ Այսօր անճառին մէջը։

Հինգերորդն է Երեկոյեան ժամերգութին. որ կըսկըսի, Սոնարհեցուէն, և կաւարտի մինչև՝ Տր ած փրկուե իմոյ՝ ի տուէ կարդացին։ Այս տեղ մոռածելու է՝ որ քն այն ժամանակը խաչէն իջուցին։

Վեցերորդն է Սաղաղականին ժամերգութին. որ կըսկըսի՝ Տր ած փրկուե իմոյէն, և կաւարտի մինչև վերջը։ Այս տեղս խորհիլ պէտք է, որ քն այն ժամանակը գերեզմանին մէջը թաղվեցաւ։

Աղթներորդն է Հանդստեան ժամը դուրթին. որ է Աղեսցէն իւր սարքն։ Այս տեղս պէտք է խորհել, որ քա՞ յա՞ ղուրթի առնելէն ետև՝ յայս ժամանակն վերնատան մէջ դուռը չի բացված առա՞ քեալներուն երևեցաւ. մեզի ալ կե՞ րևնայ վերջին օրը՝ եթէ այս սահման՞ ված ժամանակները ուղիղ դիտաւորութ՞ աղօթքի կանգնիմք նէ։

Հանուօր մէնուրի արարողութ՞ ան պատարագին։

ԱմենաՀ պատարագի խորհուրդը՝ Հ եկեղեցոյ եօթն խորհրդոց մեկն է. սա՞ կայն այս խորհուրդը անքննելի է, ինչպէս ամենաՀ երրորդութ՞ խորհուրդը. մեկալ վեց խորհուրդներուն մարդուս միտքը փոքր 'ի շատէ կը հասնի, բայց Հ պատա՞ րագին ամենևին չի կրնար հասնիր։ Ապա միայն մեզի խօսելու ու ձեզի լսե՞ լու կարելի եղածները հիմայ ըսեմք։

Ուստի նախ գիտնալ պէտք է, որ Հ պատարագի խորհրդին մէջ՝ երեք կերպ

ընթերցմունք կայ. ՝ մաղթանք քահանայի, քարոզ սարկաւագի, և երդ դըպրաց։ Ժողովրդին պէտքը չէ որ ձայնակից ըլլան քահանային կամ սարկաւագին հետ, այլ միայն ներմեռանդուբ ականջ դնեն անոնց կարդալուն. սակայն դպրաց կարդացմունքին թող ձայնակից ըլլան մտքով՝ և ոչ բերանով։

Երկրորդ՝ աս ալ դիտնալ պէտք է, որ նոր պատարագի խորհուրդին մէջը երկու կերպ արարողութի կայ. մեկը ծածուկ, մեկալը յայտնի. որոնց վրա այնքան խօսինք հիմա, որքան ժողովրդեան պէտք է դիտնալ։

Նոր եկեղեցին՝ երկնաւոր թագաւորին պալատն (սարայն) է. և նոր սեղանն՝ անոր աթոռն է. նաև ժամարար քահանայն սարկաւագք և դպրք պիտի ելլեն առջևը դայ՝ նոր պատարագ կատարելու համար։ Ուստի նախ և յառաջ պահարանը կը մտնան անոնք. և զգեստաւորեալ զարդարեալ դուրս կելանեն՝ յատեան կուդան. այն տեղը քահանայն ձեռքերը կը

լլվայ, որ է օրինակ ներքին մաքրութեան. ինչպէս մեկ մի ալ վերաբերութեան վերջը՝ մատներուն ծայրերը կը լլվայ. և աս ալ օրինակ է, որ թէ՝ հաղորդութեան մերձեցողը՝ ներելի մեղքերէն ալ պիտի մաքրվի.

Իրաւի՝ թէ պատարագը քի՛ զարշարանացը ու մահուանը յիշատակն է. բայց անոր մէջը փրկագործ տնօրէնութեան ամէն գործքերը կերևի.

Պապ քահանայն բեմը կելլայ, սեղանին առջևը կը կանգնի, վարագուրը քաշվելէն ետքը՝ սպաս կը դնէ. և այս կը նշանակէ բանին այ յղանալը յարդանդի ամենօրհնեալ կուսին Մարիամու. ասոր համար ժամաբար քահանայն այն տեղը կըսէ. Հոգին թէ եկեսցէ 'ի քեզ.

Յետ այսորիկ վարագուրի բացվելը, և քահանային վար իջնալը, և խնկարկելով ժողովրդեան մէջ շրջիլը, և կրկին բեմը ելանելը, և սեղանին առջևը երթալը, կը նշանակէ քի՛ Տն մերոյ յերկնից յերկիր իջանելը, և մարդկանց հետ շրջիլը, և ապա յերկինս առ Հայր համբառնալը.

Աբ ՝ ածը՝ է սերոբէից երդը, որ առ ած կաղաղակէին. Աբ՝ ՝ աբ՝ ՝ աբ՝ ՝ որ զօրութեց։ Աբեւտարանը՝ կը նշանակէ կայծակը՝ որ սերոբէին մեկը ունելեաք (մաշայով) սեղանէն առաւ, ու եայի մարգարէին բերանը մօտեցուց։

Մարգարէական և առաքելական գրքերանց կարդացմունքը կը նշանակէ թէ, մարգարէներուն գուշակութիւնը և առաքելոց քարոզութիւնը միատեղ՝ քի տնօրէնութիւնը կը ծանուցանեն. անոր համար առնցմէ ետքը կը կարդացվի՝ քի ամենաբ տնօրէնութեն գիրքը, որ է աբ աւետարանն։

Յետոյ երկու ափերնիս իրարու քով բերելով Հաւատամքը կըսեմք. որ աբ՝ Ներսէս լամբրոնացիին մեկնածին պէս կը նշանակէ որ՝ ներքին հինգ զգայարանքնիս աշխարհական մտածմունքներէն, և արտաքին զգայարանքնիս մարմնական գործքերէն յետս քարշելով, քրիստոնէական աբ Հաւատոյ դաւանութիւնը կուտամք, ինչպէս որ սորվեցանք՝ մարգարէական, առաքելական, և

աւետարանական ՝ի գրքերէն։

Յետ այսորիկ ժամարարը կը մերկա-
նայ. եթէ եպիսկոպոս է՝ թագը, ե-
միփորոնը, և հողաթափը կը հանէ.
իսկ եթէ քահանայ է, սաղաւարտը և
հողաթափը կը հանէ։ Ա՛ զի մինչև հի-
մա ժամարարը քի՛ օրինակ էր, բայց ա-
կէ յետոյ այն սարսափելի՛ ՝ի խորհրդոյն
սպասաւոր կը լայ, և կը կատարէ։

Ա՛ երաբերումը՝ կը նշանակէ ՝ի յով
սէփ ՝ի ծածահօրը՝ և ամենա՛ի կուսին նազա-
րէթէն ելլալ, ու բեթլէհէմ գալերնին։
Ժամարարին կիսով չափ սկիհի ծածկոցը
բանալը, ու մեկ քով քաշվիլը, կը նշանա-
կէ քի՛ կուսական ամենա՛ի ծնունդը։

Ա՛ ղդպետը կամ քշնոյն միւս կարդա-
ւորներով յատեն ելլալը ողջոյն առնելու
համար, կը նշանակէ հովիւներուն մինչև
բեթլէհէմ երթալը՝ ասելով, * Ա՛կա՛յք եր-
թիցուք մինչև ցբեթղահէմ, և տեսցո՛ւք
զինչ է բանս այս որ եղև. ‖ ղուկ. ՚ք. ՚ԺԵ։
Ռուրվառ ունող սարկաւագին՝ ողջոյն
տալու համար վար իջնալը՝ կը նշանակէ

հրեշտակին աւետիս տալը հովիւներուն, թէ * Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է՝ օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի։ ‖ ղ-ւկ։ բ։ 10։ Ինն ատենը սաբկաւագները ժողովրդեան զգուշութիւն կուտան՝ ասելով։ Ո՛ դրունս զդրունս ամ իմաստուք և զգուշուք 'ի վերս ընծայեցուցէ՛ք զմիտս ձեր։ և թէ՝ Ինչ կացցո՛ւք երկիւղիւ կացցո՛ւք բարուք կացցուք և նայեցարուք զգուշութիւն։

Իսկ եթէ ինչո՞ւ համար այսքան զգուշութիւն կը քարոզվի։ Վասն զի քի յայտնութիւնը այս երկիրս՝ երկինք եղաւ, և մարդիկները հրեշտակացան։ ասոր համար հրեշտակաց պէս՝ Աբ՝ սբ՝ սբ, տր զօրութեց, կերգեն դպիրները։ Ինն ատենը ժամարարը կը կատարէ այն ահաւոր խորհուրդը, որ քս սբ սիօն վերնատանը մէջ սահմանեց, և մինչև Հոգի սուրբ երգած ժամանակը կը կատարվի։

Ապա քի յիշատակը կատարվածին պէս, սբերը կը յիշատակվին՝ յամենայն

ծածանէն սկսեալ։ Այ՝ զի յիշատակաւ
ան մերոյ՝ և ամ աբց նր , հայրն երկնա
ւոր ընդ մարդկան հաշտեցեալ, ողորմեսցի
ամենեսեան՝ կենդանեաց և ննջեցելոց։
Այսոր համար երբ յիշատակուիները կըլը
մինայ, համարձակաձայն բարբառով տէ
ր ողորմեա՝ Հայր մերը կերգեմք։
Սարկաւագները երբ երանեալ աբեերը
կը յիշատակեն , սեղանին աջ կողմը կը
կանգնին . վասն զի անոնք վկայեալ յայտնի
աբեր են։ Բայց յետոյ երբ կենդանիները
պիտի յիշատակեն , սեղանին ձախ կողմը
կուգան , Զոհուի և փառաբանուի ասե
լով՝ ան ատենը կը յիշատակեն . որ անոնց
աբ ըլլալը դեռ յայտնի և որոշեալ չէ՛։
Սարկաւագը բարձր ձայնիւ կը գոչէ՝
Զուսխուսմ . որ է ասել՝ ուղիղ դիտաւո
ր ութիւն նայեցէք։ Այ՝ զի ահա քա՛ մեր
փրկուեը համար իւր ամէն տնօրէնուիը
կատարեց , ու յերկինս վեր ելաւ . զայս
նշանակելու համար՝ ժամարարը գլխէն
վեր կը բարձրացուցանէ աբ խորհուրդը
ասելով , Ի սրբութիւն աբց . ասել կուզէ

թէ՝ ասիկայ սրբութիւն է , բայց ամենուն չէ՝ այլ միայն նոցա է։

Յամարարին այս խօսքը լսելով դը պիրներն ալ կաղաղակեն , Այնպէս նը՝ միայն նը՝ յա՛ քա՛ է։ և մենք անով արժանի եղանք օրհնել զամենանը երրորդութիւն։ ասոր համար յետոյ դպիրները կերգեն։ Հայր նը՝ որդիդ նը՝ հոգիդ նը , և այլն։

Եւ որովհետև քա՛ նրն մը յիշէս գացած ժամանակը՝ այս ահաւոր խորհուրդը մեզի Թողուց միխիթարութիւն համար։ վայ ժամարարը նոյն նը խորհուրդը սկիհով իւր ձեռքը կառնու , և կը դառնայ ժողովրդեանը կըսէ։ Ի նը ի նը պատուական մարմնոյ և յարենէ տն մերոյ , և այլն։ Այն ատենը արժանաւորները կը հաղորդին։ և կատարեալ արժանաւոր չեղողներն ալ՝ նը սեղանին փըշրանք Աստը կը ճաշակեն , և հաղորդող ներուն մանակից կըլլան , և միաբան կաղաղակեն , Ցաք ի բարութեց քոց նր։ Եւ այս ամէն խորհրդական արարողութեց վերջը՝ ժամարար քահանայն առջի

հանած զգեստը կը հագնի, և քեմէն վար
կիջնայ։ և այս կը նշանակէ քի միւսանգամ գալուստը՝ որ ածային փառաւք 'ի դատաստան կու գայ։ ու արդարներուն օրհնութի պիտի տայ ըսելով, * Եկայք օրհնեալք հօր իմոյ։ ‖ Մատ. իե. 34։
Ասոր համար ժամարարը վար իջնալու ժամանակը կըսէ։ Որ օրհնեա զայնոսիկ, զոյք օրհնեն զքեզ տէր։

Իսկ արդ՝ ով բարեպաշտ հաւատացեալք՝ սիրելի որդիք մեր 'ի քս, ահա մեր հոգևոր հայրուն պարտաւորութիւնը՝ փոքր 'ի շատէ և ըստ մասին կատարեցինք։ Քրիստոնէական աբ հաւատոյ վարդապետութիւնը՝ ձեր հասկընալու կերպիւ՝ ռամկական ոճով ձեզի իմացուցինք։
Ասկէց ետև կը մնայ որ՝ դուք ալ ձեր պարտաւորութիւնը կատարէք։ Ա՛ն զի աբ գիրքը կըսէ * Զ մարդն իսկզբանէ յանձնիշխան կամս ստեղծ աբ, զՀուր

և զՔուր եդ առաջի , զի յոր կամեսցի միսեսցէ զձեռս իւր . զի առաջի մարդոյ է մահ և կեանք . || սիրաք . ԺԵ . 14 ։

Ապա Ջանք ընենք քրիստոնէական սէր հաւատոյ վայելուչ գործքերով մեր հոգին զարդարել , և իբրև զկոյս մի սէր յանդիման առնել քի , և առնուլ 'ի նմանէ զօրհնութիւն և զփառս յաւիտեանս ամէն ։



Ի ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ

ՏՊԵԱԼ

Ի ՄԻՋԱԳԻՒՂ

ՌՄՀԷ